ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» Հոկտեմբերի 2025 թ. N 137-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հետ աշխատանքների համակարգող նշանակել Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Մանուկյանին, իսկ պատասխանատու պաշտոնատար անձ՝ մամուլի քարտուղար Նվեր Կոստանյանին:

2. Խորհրդի հետ աշխատանքների համակարգողին և պատասխանատու պաշտոնատար անձին՝

1) խորհրդի ձևավորման գործընթացն իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետով հաստատված կարգին համապատասխան.

2) ապահովել որոշման 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով ամրագրված ժամկետներում համապատասխան աշխատանքների կատարումը:

11/10/2025

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293 **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**